Առաջին ընթերցում

Կ-721-27.11.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.3-րդ հոդվածով.

«**Հոդված 20.3. Քաղաքացիական ավիացիայի բնագավառում մատուցած ծառայությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

1. Քաղաքացիական ավիացիայի բնագավառում մատուցած ծառայությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

1)	**Աերոդրոմի, ուղղաթիռադաշտի (հրապարակ) համապատասխանության գնահատում և սերտիֆիկատի տրամադրում, թռիչք-վայրէջքի հարթակների համապատասխանության գնահատում և շահագործման թույլտվության տրամադրում**	
ա.	Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) միջազգային ստանդարտներով սահմանված ճշգրիտ վայրէջքի համար II/III կարգախմբով վազքուղով աերոդրոմի սերտիֆիկացում	
	սերտիֆիկատի տրամադրման համար	բազային տուրքի 2000-ապատիկի չափով

	աերոդրոմի շահագործողական ցուցանիշերի կամ տվյալների փոփոխությունների դեպքում աերոդրոմի ձեռնարկի փոփոխությունների և լրացումների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
	առանց նախնական հաստատման փոփոխության համաձայնեցման համար	բազային տուրքի 500-ապատիկի չափով
	սերտիֆիկատի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
բ.	**Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) միջազգային ստանդարտներով սահմանված ճշգրիտ վայրէջքի համար I կարգախմբով վազքուղով աերոդրոմի սերտիֆիկացում**	
	սերտիֆիկատի տրամադրման համար	բազային տուրքի 1500-ապատիկի չափով
	աերոդրոմի շահագործողական ցուցանիշերի կամ տվյալների փոփոխությունների դեպքում աերոդրոմի ձեռնարկի փոփոխությունների և լրացումների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 700-ապատիկի չափով
	առանց նախնական հաստատման փոփոխության համաձայնեցման համար	բազային տուրքի 400-ապատիկի չափով
	սերտիֆիկատի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 350-ապատիկի չափով

գ.	**Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) միջազգային ստանդարտներով սահմանված ոչ ճշգրիտ վայրէջքի համար վազքուղով աերոդրոմի սերտիֆիկացում**	
	սերտիֆիկատի տրամադրման համար	բազային տուրքի 900-ապատիկի չափով
	աերոդրոմի շահագործողական ցուցանիշերի կամ տվյալների փոփոխությունների դեպքում աերոդրոմի ձեռնարկի փոփոխությունների և լրացումների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 600-ապատիկի չափով
	առանց նախնական հաստատման փոփոխության համաձայնեցման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
	սերտիֆիկատի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
դ.	**Ուղղաթիռադաշտի (հրապարակ) համապատասխանության գնահատում և սերտիֆիկացում**	
	սերտիֆիկատի տրամադրման համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
	Ուղղաթիռադաշտի (հրապարակ) շահագործողական ցուցանիշերի կամ տվյալների փոփոխությունների դեպքում ուղղաթիռադաշտի (հրապարակ) ձեռնարկի փոփոխությունների և լրացումների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով

	առանց նախնական հաստատման փոփոխության համաձայնեցման համար	բազային տուրքի 300-ապատիկի չափով
	սերտիֆիկատի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 250-ապատիկի չափով
ե.	**Ընդհանուր նշանակության ավիացիայի կամ ներքին ոչ կանոնավոր առևտրային փոխադրումների համար նախատեսված թռիչք-վայրէջքի հարթակների համապատասխանության գնահատում և շահագործման թույլտվության տրամադրում**	
	Շահագործման թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 600-ապատիկի չափով
	փոփոխության համաձայնեցման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
	Շահագործման թույլտվության պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով
2)	**Աերոնավիգացիոն սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների թույլտվության տրամադրում (սերտիֆիկացում)**	
ա.	օդային երթևեկության կազմակերպման ծառայություն մատուցող կազմակերպությանը թույլտվության (սերտիֆիկատի) տրամադրում	բազային տուրքի 2000-ապատիկի չափով
բ.	աերոնավիգացիոն կապի և դիտարկման ծառայություն մատուցող կազմակերպությանը թույլտվության (սերտիֆիկատի) տրամադրում	բազային տուրքի 1500-ապատիկի չափով

գ.	աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություն մատուցող կազմակերպությանը թույլտվության (սերտիֆիկատի) տրամադրում	բազային տուրքի 800-ապատիկի չափով
դ.	աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովման ծառայություն մատուցող կազմակերպությանը թույլտվության (սերտիֆիկատի) տրամադրում	բազային տուրքի 800-ապատիկի չափով
ե.	աերոնավիգացիոն սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից օդային երթևեկության կազմակերպման համակարգերում թռիչքների անվտանգությանն առնչվող նշանակալի փոփոխությունների ընդունման կամ չընդունման համար	բազային տուրքի 500-ապատիկի չափով
զ.	աերոնավիգացիոն սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից օդային երթևեկության կազմակերպման համակարգերում թռիչքների անվտանգությանն առնչվող ոչ նշանակալի փոփոխությունների ուսումնասիրության համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
է.	աերոնավիգացիոն սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների սերտիֆիկատների պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
3)	օդանավակայանների շրջակայքում կառուցվելիք խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրություն և համաձայնության տրամադրում կամ մերժում	բազային տուրքի 40-ապատիկի չափով
4)	օդային տրանսպորտով բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության ծավալի (միջինացված հաշվարկը՝ կիլոմետրով) վերաբերյալ տեղեկանքի տրամադրման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
5)	Օդային երթևեկության սպասարկման կարգավարի որակավորում	

ա.	օդային երթևեկության կառավարման ուսանող կարգավարների վկայականներ տալու համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
բ.	օդային երթևեկության կառավարման կարգավարների վկայականներ տալու համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
գ.	վկայականում որակավորման հատուկ նիշի տրամադրման և դրա երկարաձգման քննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	վկայականում միավորի հատուկ նիշ տալու և դրա երկարաձգման քննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ե.	վկայականում հրահանգչի և քննողի հատուկ նիշ տալու և դրա երկարաձգման համար	բազային տուրքի 90-ապատիկի չափով
զ.	վկայականում լեզվի հատուկ նիշ տալու և երկարաձգման քննության համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
է.	վկայականի գործողության ժամկետը երկարաձգելու համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ը.	վկայականի վերականգնման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
թ.	վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ժ.	վկայականի փոխարինման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ժա.	օտարերկրյա օդային երթևեկության կառավարման կարգավարի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
6)	օդային երթևեկության կարգավարների վերապատրաստման համար սկզբնական ուսուցման դասընթացների ծրագրերի հաստատման կամ ճանաչման համար	բազային տուրքի 150-ապատիկի չափով
7)	**Ավիացիոն անվտանգության ծառայությունների համար**	

ա.	Օդանավակայաններ շահագործող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի հաստատման համար	
	միջազգային օդային փոխադրումներն սպասարկող օդանավակայանների համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	ներքին օդային փոխադրումներն սպասարկող օդանավակայանների համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
բ.	Օդանավակայաններ շահագործող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի փոփոխության հաստատման համար	
	միջազգային օդային փոխադրումներն սպասարկող օդանավակայանների համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
	ներքին օդային փոխադրումներն սպասարկող օդանավակայանների համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
գ.	Օդանավ շահագործողի վկայականի կրող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի հաստատման համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 25-ապատիկի չափով
դ.	Օդանավ շահագործողի վկայականի կրող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի փոփոխության համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 25-ապատիկի չափով

ե.	օդային երթևեկության սպասարկումներ իրականացնող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի հաստատման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
զ.	օդային երթևեկության սպասարկումներ իրականացնող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի փոփոխության համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
է.	ավիացիոն գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի հաստատման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ը.	ավիացիոն գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերի փոփոխության համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
թ.	Ավիացիոն անվտանգության մասով մասնագետների սերտիֆիկացում	
	ավիացիոն անվտանգության որակի հսկողության տեսուչի քննության համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	ավիացիոն անվտանգության որակի հսկողության տեսուչի սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	ավիացիոն անվտանգության մասով հրահանգիչների քննության համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	ավիացիոն անվտանգության մասով հրահանգիչների սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	թռիչքային անձնակազմի անդամների թռիչքային անցագրեր տալու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	ավիացիոն անվտանգության մասով զննող օպերատորների քննության համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով

	ավիացիոն անվտանգության մասով զննող օպերատորների սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով
ժ.	Ավիացիոն անվտանգության ուսումնական ծրագրերի հաստատում	
	օդանավակայանների ավիացիոն անվտանգության ուսումնական ծրագրերի հաստատում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
	ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ուսումնական ծրագրերի հաստատում	բազային տուրքի 30-ապատիկի չափով
8)	Վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման, վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումներն սպասարկող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրման համար	
ա.	օդանավ շահագործող կազմակերպություններին վտանգավոր համարվող բեռների օդային փոխադրման թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
բ.	վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
գ.	վտանգավոր բեռների օդային փոխադրումներն սպասարկող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրում	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպության թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ե.	վտանգավոր բեռների փոխադրման սահմանված կարգից ազատման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
9)	**Օդանավի պետական գրանցման և թռիչքային պիտանիության պահպանման համար**	

ա.	Օդանավի պետական գրանցման համար (ներառյալ օդանավի աղմուկի վկայականի տրամադրումը)	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 25-ապատիկի չափով
	օդանավի ապագրանցման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
բ.	Օդանավի պիտանիության արտահանման վկայականներ (սերտիֆիկատներ) տալու համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 60-ապատիկի չափով
գ.	օդանավի գրանցման սերտիֆիկատի փոխարինման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	օդանավի գրանցման սերտիֆիկատի կրկնագրի տրման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ե.	Օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրման համար (ներառյալ օդանավի ռադիոկայանի վկայականի տրամադրումը)	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 150-ապատիկի չափով

	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 80-ապատիկի չափով
զ.	Օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի գործողության ժամկետը երկարաձգման համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 60-ապատիկի չափով
է.	աերոնավտիկական արտադրատեսակների ռեսուրսների երկարաձգման վերաբերյալ եզրակացության տրամադրում	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ը.	օդանավի թռիչքի թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
թ.	օդանավի թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության (Փարտ-Մ) սերտիֆիկատ տալու համար	բազային տուրքի 160-ապատիկի չափով
ժ.	Օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայագրում	
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայագրման (ՓԱՐՏ-66) հայտի համար	բազային տուրքի 12-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայական (ՓԱՐՏ-66) տալու համար	բազային տուրքի 12-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 7-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի կրկնօրինակ տրամադրելու համար	բազային տուրքի 9-ապատիկի չափով

	օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականում համապատասխան որակավորման վերաբերյալ նշումներ կատարելու համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	օտարերկրա օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ժա.	Օդանավի տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկացում	
	օդանավի տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկատի (Փարտ-145) տրամադրման համար	բազային տուրքի 120-ապատիկի չափով
	օդանավի տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկատի (Փարտ-145) փոփոխության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	օտարերկրյա տեխնիկական սպասարկման կազմակերպության սերտիֆիկատի (Փարտ-145) ճանաչման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
10)	Ավիացիոն ուսումնական հաստատությունների հաստատում կամ ճանաչում	
ա.	ավիացիոն ուսումնական հաստատությունների համապատասխանության ուսումնասիրության և վկայականի տրամադրման համար	բազային տուրքի 600-ապատիկի չափով
բ.	հաստատված ավիացիոն ուսումնական հաստատության ձեռնարկի (Approved Training Organization Manual) փոփոխության ուսումնասիրության և հաստատման համար	բազային տուրքի 300-ապատիկի չափով
գ.	ավիացիոն ուսումնական ծրագրի հաստատման կամ փոփոխությունների կատարման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
դ.	ուսումնական թռիչքային վարժասարքի հաստատման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

ե.	ուսումնական թռիչքային վարժասարքի ճանաչման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
զ.	հաստատված կամ ճանաչված ուսումնական թռիչքային վարժասարքի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
է.	հաստատված ավիացիոն ուսումնական հաստատության վկայականի տարեկան պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով
ը.	Օտարերկրյա ավիացիոն ուսումնական հաստատության ճանաչման համար	
	ընդհանուր հիմունքներով	բազային տուրքի 400-ապատիկի չափով
	ավտոմատ կերպով	բազային տուրքի 100-ապատիկի չափով
թ.	ճանաչված օտարերկրյա ավիացիոն ուսումնական հաստատության պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ժ.	հայտարարագրված ավիացիոն ուսումնական հաստատության ուսումնասիրության և հայտարարագրի հաստատման համար	բազային տուրքի 130-ապատիկի չափով
ժա.	հայտարարագրված ավիացիոն ուսումնական հաստատության հայտարարագրի պահպանման համար՝ տարեկան	բազային տուրքի 30-ապատիկի չափով
11)	Ավիացիոն բժշկական հաստատության սերտիֆիկացում	
ա.	ավիացիոն բժշկական հաստատության սերտիֆիկատի տրամադրման համար	բազային տուրքի 400-ապատիկի չափով

բ.	ավիացիոն բժշկական հաստատության սերտիֆիկատի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 150-ապատիկի չափով
գ.	ավիացիոն բժշկական փորձագետի համապատասխանության վկայականի տրամադրման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ.	ավիացիոն բժշկական փորձագետի համապատասխանության վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
12)	Հայաստանի Հանրապետության տարածքում օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրամադրման համար	
ա.	Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման համար	
	5700 կգ և ավել կամ 19 ուղևորից ավելի օդանավերի դեպքում	բազային տուրքի 50000-ապատիկի չափով
	մինչև 5700 կգ կամ 19 ուղևորից պակաս օդանավերի դեպքում	բազային տուրքի 5000-ապատիկի չափով
	օդանավի քանակի ավելացմամբ պայմանավորված օդանավ շահագործողի վկայականին կից շահագործման հատուկ դրույթների փոփոխության կամ նոր շահագործման հատուկ դրույթների տրամադրման համար	բազային տուրքի 800-ապատիկի չափով
	օդանավ շահագործողի վկայականի տրամադրման համար հաստատման ենթակա փաստաթղթերի փոփոխությունների գնահատման և հաստատման համար	բազային տուրքի 350-ապատիկի չափով
	օդանավ շահագործողի վկայական տալու համար հիմք հանդիսացած պայմանների վրա հնարավոր ազդեցություն ունեցող և նախնական	բազային տուրքի 200-ապատիկի չափով

	հաստատում պահանջող փոփոխությունների գնահատման և հաստատման համար	
	օդանավ շահագործողի վկայականի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 2500-ապատիկի չափով
բ.	կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի տրամադրման համար	բազային տուրքի 5000-ապատիկի չափով
գ.	կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի փոփոխության համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
դ.	կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի պահպանության համար՝ տարեկան	բազային տուրքի 800-ապատիկի չափով
ե.	Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու	
	երկու և ավել ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	մեկանգամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 5-ապատիկի չափով
զ.	Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու	
	կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 30-ապատիկի չափով

	երկու և ավել ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	մեկանգամյա ոչ կանոնավոր օդային հաղորդակցության դեպքում	բազային տուրքի 50-ապատիկի չափով
է.	Հայաստանի Հանրապետությունում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման թույլտվության տրամադրման համար	
	անօդաչու թռչող համակարգերի դեպքում	բազային տուրքի 2-ապատիկի չափով
	ընդհանուր նշանակության ավիացիայի օդանավերի դեպքում	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	Հայաստանի Հանրապետությունում ուսումնական բնույթի թռիչքների իրականացման մեկանգամյա թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 2-ապատիկի չափով
	Հայաստանի Հանրապետությունում ուսումնական բնույթի թռիչքների իրականացման տարեկան թույլտվության տրամադրման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
13)	Թռիչքային և սրահի անձնակազմի անդամների վկայագրման համար	
ա.	կոմերցիոն օդաչուի վկայականի (CPL) քննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	կոմերցիոն օդաչուի վկայական (CPL) տալու համար	բազային տուրքի 250-ապատիկի չափով
	կոմերցիոն օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
բ.	օտարերկրյա կոմերցիոն օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 80-աապատիկի չափով

գ.	սիրողական օդաչուի վկայական (PPL) տալու համար	բազային տուրքի 150-ապատիկի չափով
դ.	սիրողական օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ե.	օտարերկրյա սիրողական օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
զ.	գծային օդաչուի վկայականի քննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	գծային օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 350-ապատիկի չափով
է.	գծային օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
ը.	օտարերկրյա գծային օդաչուի վկայականի ճանաչման քննության համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
13.9.1	օտարերկրյա գծային օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
թ.	շտուրմանի վկայական տալու համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
ժ.	շտուրմանի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

ժա.	օտարերկրյա շտուրմանի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ժբ.	բորտինժենների վկայականի տալու համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
ժգ.	բորտինժենների վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ժդ.	օտարերկրյա բորտինժենների վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ժե.	բորտօպերատորի և բորտուղեկցորդի վկայական տալու համար	բազային տուրքի 75-ապատիկի չափով
ժզ.	բորտօպերատորի և բորտուղեկցորդի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
ժէ.	օտարերկրյա բորտօպերատորի և բորտուղեկցորդի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
ժը.	օդապարիկի օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 80-ապատիկի չափով
ժթ.	օդապարիկի օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
ժժ.	օտարերկրյա օդապարիկի օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ժժա.	օդաչուի վկայականում հրահանգչի որակավորման տրամադրման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
ժժբ.	օդաչուի վկայականում հրահանգչի որակավորման գործունեության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

ժժգ.	օտարերկրյա հրահանգիչ օդաչուի վկայականի ճանաչման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
ժժդ.	քննող օդաչուի վկայականի քննության համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	քննող օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
ժժե.	քննող օդաչուի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով
ժժզ.	օտարերկրյա քննող օդաչուի վկայականի ճանաչման քննության համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ժժէ.	օտարերկրյա քննող օդաչուի վկայական տալու համար	բազային տուրքի 120-ապատիկի չափով
ժժը.	թռիչքային և սրահի անձնակազմի անդամի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: